

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԲԱՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ
ՄԵԿԻ ՄԱՍԻՆ

Լ. Հ. ԱԼՈՑԵՆ

Անգլերեն լեզվում բառի կառուցվածքը ենթարկվել է տարբեր փոփոխությունների, որոնք տեղի են ունեցել մի շարք ձևաբանական և հնչյունաբանական երևույթների հետևանքով: Այդ փոփոխություններից ավելի կարևորներից մեկն է պարզեցումը, որը դիտվում է ինչպես անգլերեն, այնպես էլ այլ լեզուներում:

Տվյալ երևույթը առաջին անգամ քննարկել և այդպես է անվանել լեզվաբան Վ. Ա. Բոգորոդիցկին¹: Հետագայում այդ հարցին են անդրադարձել Ի. Ա. Բոդունցը և Կուրտենեն, Ն. Վ. Կրուչևսկին, Ն. Ն. Ամսուվան, Ի. Ա. Անաստասիևը, Ս. Ս. Մասլովա-Լաշանսկայան և այլք:

Լեզվաբանական գրականության մեջ պարզեցումը դիտվում է որպես լեզվի զարգացման ընդհանուր միտումների դրսևորում: Տվյալ երևույթը անգլերենի որոշ տեսաբաններ անվանել են տարբեր ձևերով. amalgamated compounds, fixed compounds, ex-compounds, disguised compounds և այլն:

Պարզեցումն այնպիսի ձևաբանական երևույթ է, երբ բարդ կամ ածանցյալ կառուցվածքով բառը լեզվի զարգացման ընթացքում կորցնում է առանձին ձևույթների նշանակությունը և երկձևույթ կամ եռաձևույթ բառը ենթարկվում է փոփոխությունների, վերածվելով մեկձևույթ կառուցվածքով բառի:

Քննարկելով բառի կառուցվածքի այդ տիպի փոփոխությունները և խոսելով պարզեցման բնորոշ առանձնահատկությունների մասին, Ն. Ն. Ամսուվան նշում է, որ «պարզեցումը տեղի է ունենում միայն այն բառերում, որոնք տվյալ լեզվի սահմաններում եղել են երբեմնի բարդ կազմով բառեր»²:

Ըստ Ն. Ամսուվայի, բառի այս կամ այն բաղկացուցիչ մասի կորուստը պարզեցում չէ, այլ ձևաբանական փոփոխության էական մեկ ուրիշ տեսակ: Օրինակ, միջին անգլերենի բայի անորոշ ձևի— en վերջածանցի ընկնելը պարզեցում չէ, և ասենք to know բայը knowen բայի պարզեցված ձևը չէ³:

Պարզեցման դեպքում բառի ներսում առկա է ձևույթների փոփոխություն՝ այս կամ այն չափով, ընդ որում, պահպանվում է սկզբնական բառի ընդհանուր ձևույթային կազմը: Բառեր, որոնք սկզբնապես եղել են բարդ կամ ածանցյալ, կորցնում են իրենց վերլուծման ենթարկվելու կարողությունը, և ձևույթների միջև գոյություն ունեցող սահմանները փոփոխության են ենթարկվում: Չնայած որոշակի ներքին փոփոխությունների, նշված ձևույթները լիովին չեն անհետանում, այլ միաձուլվում և դառնում են մեկ միավոր: Այդ միավորները միաժամանակյա կտրվածքում համարվում են ոչ վերլուծելի: Տարժամանակյա կտրվածքում նրանք վերլուծելի են: Այսպես, օրինակ, անգլերեն jealous բառը տարժամանակյա կտրվածքում եղել է ածանցյալ, որտեղ jeal-ը բառի արմատն է և -ous-ը՝ վերջածանցը: Ժամանակակից անգլերեն լեզվում այն վերլուծության չի ենթարկվում, քանի որ գոյություն չունի jeal առանձին բառ, որն անգլերեն լեզվում ունենա ինքնուրույն գործա-

¹ Sd'v B. A. Богородицкий. Об основных факторах морфологического развития языка.—«Русский филологический вестник», т. XXXIII, Варшава, 1855, էջ 219—251; *ևույնի*, Очерки по языковедению и русскому языку, Казань, 1901:

² Н. Н. Амсова. Слова с опущенным морфологическим составом в совр. англ. языке. «Исследования по грамматике», Уч. зап. ЛГУ, № 180, Լենինգրադ, 1955, էջ 91:

³ Նույն տեղում, էջ 84:

ուրք, առանց -ous վերջածանցի: Նմանօրինակ բառեր ժամանակակից անգլերենում հանդիպում են հաճախ:

Նշանակում է պարզեցման երևույթը քննարկելիս անհրաժեշտ է տարբերել լեզվական միավորների վերլուծության միաժամանակյա և տարժամանակյա մեթոդները, քանի որ տվյալ հիմքերի վերլուծության ժամանակ մենք ճանդիպում ենք որոշ դժվարությունների:

Սույն հոդվածում փորձ է արվում դիտել պարզեցման տարբեր ձևերն անգլերենում: Առաջին տեսակին, որը մենք պայմանականորեն կանվանենք ամբողջական պարզեցում, վերաբերում են այն բառերը, որոնք ի սկզբանե եղել են բարդ և լիովին կորցրել են իրենց վերլուծելիությունը: Այս դեպքում բառի բաղկացուցիչ մասերի սահմանագիծը լիովին վերացել է, և բարդ բառն արդեն վերածվել է պարզի: Այսպես, օրինակ, husband բառը ծագել է հին անգլերեն hūsebonde բառից, որտեղ hūse նշանակել է տուն և ban (ապրել), այսինքն բառացի՝ տանտեր: Ժամանակակից անգլերենում husband (ամուսին) բառը պարզեցման հի դեպք է, քանի որ այն վերլուծելիս լեզվում չկան *hūs կամ *band համապատասխան հարաբերակից բառերը: Sheriff (շերիֆ) բառը համապատասխանում է հին անգլ. scīr (շրջան, մարզ) (ժամանակակից անգլերեն shire— կոմսություն) և gerefa (գլխավոր կառավարիչ) բառերին: Նույն ձևով nightingale (սոխակ) բառը ծագել է night (գիշեր) և gale բառերից, ընդ որում վերջինս առաջացել է gālen (երգել) բառից, այսինքն բառացի՝ գիշերային երգիչ:

Ամբողջական պարզեցմանն են վերաբերում նաև այն դեպքերը, երբ հին անգլերենի բարդ քառի բաղադրիչները միաձուլվել են ոչ միայն ձևաբանորեն, այլև զուգակցվել են խիստ հնչյունափոխությամբ և առանց տարժամանակյա վերլուծության հազիվ թե հնարավոր լինի վերականգնել բառի ձևային սահմանագիծը և որոշել նրանց սկզբնական ձևը: Այսպես, lord բառը առաջացել է հին անգլ. hlāf (հաց) և weard (պահպան) բառերից (բառացի՝ հացի պահպան, տեր): lady (տիկին) բառը ծագել է hlāf (հաց) ժամանակակից անգլերենում loaf—բրօն, և digean (հունցել) բառերից, daisy (մարգարտածաղիկ) բառը համապատասխանում է հին անգլերեն dæses (օր) և ēdæ (աչք) (ժամանակակից անգլ. eye) բառերին, hussy, որ նշանակում է փողոցային աղջիկ, կազմված է hūs (տուն) և wif (կին) բառերից: Ինչպես երևում է, այն նշված բառերը ոչ միայն ածանցյալ, այլև խիստ պարզեցված և միարմատ բառեր են ժամանակակից անգլերենում:

Պարզեցման մեջ են մտնում նաև այլ տիպի բառեր, երբ հին անգլերենի բարդ քառի բաղադրիչներից մեկը համընկնում է այսօր լեզվում ինքնուրույն գործածվող համապատասխան նույնարմատ բառին: Այսպիսի պարզեցում դիտվում է շաբաթվա օր ցույց տվող բառերում: Օրինակ հին անգլերեն Monandæg (բառացի՝ լուսնի օր) երկուշաբթի, Tuesday (բառացի՝ պատերազմի աստված Տիվի օր)— երեքշաբթի, Wednesday (բառացի՝ Վոտանի օր)— չորեքշաբթի, Szturnesday (բառացի՝ Սատուրնի օր)— շաբաթ և այլն: Ժամանակակից անգլերենում այդ բառերին համապատասխանում է Monday, Tuesday, Wednesday, Saturday և այլն: Արդի անգլերենում նշված բառերը ոչ թե բարդ են, այլ ինչ-որ չափով պարզ: Այս բառերի առաջին բաղադրիչները՝ Mon-, Tues-, Wednes-, Satur- և այլն կորցրել են իրենց համարժեքները, մինչդեռ -day երկրորդ բաղադրիչը հարաբերակցվում է day (օր) բառի հետ: Ահա այսպես են այս բառերը տարբերվում առաջին տեսակից՝ husband, lord և այլ բառերից:

Ըստ էության վերը նշված երկու տեսակի բառերը ենթարկվել են նույն երևույթին՝ պարզեցմանը, քանի որ բոլոր դեպքերում մենք գործ ունենք երբեմնի բարդ բառերի հետ: Սակայն ժամանակակից անգլերենում նրանք ունեն տարբեր ձևաբանական կառուցվածքներ: Առաջին դեպքում (husband, sheriff, lord և այլն) չկա համապատասխան հարաբերակից շարք: Մինչդեռ երկրորդ դեպքում գոյություն ունի հարաբերակցության մի շարք՝ day բառի հետ՝ -day բաղադրիչի իմաստային կապը day (օր) բառի հետ պահպանվում է: Յու. Մալովը⁴ -day բաղադրիչը անվանում է մեկուսի ձևույթ, իսկ Չ. Հոքեթը⁵ այն համարում է մեկարժույթ ձևույթ:

Նմանօրինակ երևույթ է դիտվում ժամանակակից անգլերենի cow- բաղադրիչով բառերում, ինչպես օրինակ, cowslip (կովացնուկ), cowpock (ծաղկափշուկ կովի վրա), cowparsley (բերկրատերև), cowpox (Ռորթի ծաղիկ, Ռիվանդություն)⁶, որտեղ cow-ն հարաբերակցվում է cow (կով) բառի հետ, և իմաստային կապը առկա է նույն ձևով, ինչպես -day բաղադրիչով բառերում:

⁴ S. J. Ю. С. Маслов. Об основных и промежуточных ярусах в структуре языка. «Вопросы языкознания», 1968, № 4, էջ 78:

⁵ S. J. C. F. Hockett, A course in Modern linguistics, New York, 1958, p. 120—127:

Պարզեցման այս տեսակը ներառում է -dew բաղադրիչով բառեր, որոնք Ռարաբերակցվում են dew (ցող) բառի հետ: Այդ մասին է վկայում -dew բաղադրիչի մասնակի իմաստափոխությունը mildew (բորբոս), dewdrop (ցողի կաթիլ, շաղիկ), dewfall (ցողում, ցողատարափ) բառերում: Ինչպես cow-, այնպես էլ dew- բաղադրիչը նշված դեպքերում գտնվում է ձևային հնչյունախմբի անցման շրջանում: Սա կարելի է դիտել որպես պարզեցման երկրորդ դեպք՝ մասնակի պարզեցում:

Պարզեցումը տեղի է ունեցել բաղադրի բարդություններում, որտեղ երկրորդ մասը չի միաձուլվել առաջինին, այլ, ընդհակառակը, վերածվել է բառակազմական ածանցի⁶: Այդպիսի երևույթ տեղի է ունեցել հին անգլերեն *līc* (մարմին) գոյականի հետ, որը, ավելանալով գոյականական հիմքերին, կազմել է ածական: Հետագայում այն վերածվել է ածականակերտ -ly ածանցի: -hood գոյականակերտ ածանցը նույն ձևով առաջացել է հին անգլերեն *hād* (վիճակ, դրույթ) գոյականից: -ful ածանցը համապատասխանում է հին անգլերեն *leas* (զորկ) ածականին և այլն: Հին անգլերեն *freondlic* (ընկերական, բարեկամական) բառը ժամանակակից անգլերենում դարձել է *friendly*, *sleazeples* (անքուն) > *sleepless*, *sor* (վշտալի) > *sorrowful*, *childhād* (մանկություն) > *childhood* և այլն:

Նմանօրինակ պարզեցում տեղի է ունեցել որոշ աշխարհագրական անվանումներում, որտեղ բաղադրիչները լիովին միաձուլվել, դարձել են մեկ միավոր, և ժամանակակից անգլերենում նրանք ոչ թե ածանցավոր, այլ պարզ բառեր են: Հին անգլերեն *hām* բառը, որը նշանակել է տուն, վերածվել է ածանցի և ժամանակի ընթացքում կորցրել իր սկզբնական իմաստը: Այսպես, *Notingham* նշանակել է սնտինգների հայրենիք, մինչդեռ ժամանակակից անգլերենում այդ բառը տրոհելի չէ: Նույն ձևով են առաջացել *Buckingham*, *Chatham* և այլ աշխարհագրական անվանումները, որտեղ -hām բաղադրիչը ժամանակին կորցրել է իր իմաստային կապը *home* (տուն) բառի հետ, միաձուլվելով նախորդ բաղադրիչին: Այսպիսի երևույթ է տեղի ունեցել -shire, -chester, -ford բաղադրիչների հետ, որոնք ևս գործածվել են որպես ինքնուրույն բառեր, սակայն հետագայում բարդ բառերի կազմում ենթարկվել են պարզեցման: Միանալով երբեմնի բարդ բառերի բաղադրիչներին, -chester բաղադրիչը, որ ծագել է լատիներեն *castra* (ճամբար) բառից, ժամանակակից անգլերենում վերածվել է հնչյունախմբի և տվյալ անվանումներում վերլուծության ենթակա չէ, օրինակ, *Chichester*, *Winchester*, *Manchester* և այլն: -Scir (շրրջան) բաղադրիչի այդպիսի պարզեցում է դիտվում *Oxfordshire*, *Berkshire*, *Derbysire*, *Hampshire*, *Lancashire* և այլ անվանումներում:

Պարզեցման նշված երկու դեպքերից քաջի, կա նաև այլ տեսակ, որի դեպքում դիտվում են առնմանության, սղման և հնչյունական այլ փոփոխություններ: Հին անգլերեն *godsibb* (բավառանք) բառը համապատասխանում է ժամանակակից անգլերենի *gossip* բառին, որտեղ տեղի է ունեցել առնմանություն, կամ հին անգլերեն *wifman* (կին) բառը, դարձյալ առնմանության հետևանքով, փոխվել և դարձել է *woman*, *berezn* > *barn*. *ædðspel* > *gospel*: Պարզեցման քննարկված տեսակին են պատկանում նաև այն բառերը, որոնցում տեղի է ունենում ձևային փոփոխություն (ներուկցիա), որն ավելի բնորոշ է միջին անգլերենի շրջանին: Նման սղում հիմնականում տեղի է ունենում շեշտադրության փոփոխության պատճառով: Հին անգլերեն *e:ning* (թագավոր) բառը ժամանակակից անգլերենում փոխվել է *king* բառին՝ ձևային սղման հետևանքով: *weor*—old բառը դարձել է *world* (աշխարհ): Հին անգլերեն *Engleland* բառը դարձել է *England*, *Oxenaford*—*Oxford* և այլն:

Ինչպես երևում է վերը նշվածից, պարզեցումը հետևանք է բառի բաղադրիչների ձուլման, եթե պատմականորեն այն եղել է բարդ, այս կամ այն բաղադրիչի գործածության և բառի ներսում տեղի ունեցած հնչյունական փոփոխությունների: Պարզեցման ներքին գործող ուժը հնչյունական գործոնն է, որը և հանգեցրել է ձևաբանական փոփոխությունների: Այդ իսկ փոփոխություններն իրենց հերթին պայմանավորել են ժամանակակից անգլերենի բառի կառուցվածքը:

Л. О. АЛЮЯН—Об двой движущей силе изменения структуры слова в английском языке.—В статье делается попытка рассматривать опрощение слова, которое способствовало изменению структуры слова в английском языке. Опрощение—это морфологическое явление, когда слово со сложной или производной структурой в процессе развития языка утрачивает значение отдельных морфем в двух морфемном или трехморфемном слово подвергается изменениям, превращаясь в слово с одноморфемной структурой. Выделяются три основных типа опрощения: полное, частичное и сопровождавшееся редукцией или ассимиляцией.

⁶ S4՝ Կ. А. Левковская, Словообразование, М., 1954: